ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2010 թ. ապրիլի 21-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը՝ նվիրված բաժանմունքի 2009 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքներին:

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովում ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, *որը Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս Յուրի Ապրեսյանին հանձնեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամի դիպլոմ և ոսկե կրծքանշան: Իր շնորհակալական խոսքում* Յու. Ապրեսյանը *նշեց, որ իր համար բացառիկ պատիվ է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ ընտրվելը. դա բարձրագույն գնահատական է, որ կարող է ստանալ գիտնականն իր ակադեմիական գործունեության համար: Անվանի լեզվաբանը նաև նշեց, որ այդ բարձր կոչումը պարտավորեցնող է, և ինքը կաշխատի արդարացնել ՀՀ ԳԱԱ վստահությունը:*

Բաժանմունքի 2009 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 8 ընդհանուր ժողով և բյուրոյի 21 նիստ, որոնցում քննարկվել են գիտական և գիտակազմակերպական բնույթի բազմաթիվ հարցեր: Տարին հոբելյանական էր բաժանմունքի երկու ինստիտուտների համար. լրացավ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50 և Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի 40-ամյակները: Ինստիտուտներն իրենց հոբելյանները նշել են լավ կազմակերպված գիտաժողովներով: Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հիմնադրման 50-ամյա հոբելյանի միջոցառումների շրջանակներում հրավիրել է «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում. նվաճումներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են նաև արտասահմանյան 20 գիտնականներ: Դրական է այն, որ տարելիցների առիթով չեն կատարվում սոսկ հոբելյանական հանդիսություններ, այլ, ինչպես նախորդ տարում Արվեստի և Արևելագիտության ինստիտուտների կեսդարյա հոբելյաններին, ամփոփվում են անցած ուղու արդյունքները և այդ հիմքի վրա կանխորոշվում հետագա անելիքները:

Չնայած սոցիալական լարված ու դժվարին պայմաններին՝ բաժանմունքի հիմնարկների գիտաշխատողները, ամբողջությամբ վերցրած, մեծ նվիրումով ու պատասխանատվությամբ են գործել և հասել լավ արդյունքների: Եթե 2008 թ. հրատարակվել է 111 գիրք, հաշվետու տարում հրատարակվել է 122 գիրք, որից 6-ը

արտասահմանում, ավելի քան 800 հոդված, որից 69-ը արտասահմանում: Հաշվետու տարին հարուստ է եղել նաև միջազգային, հանրապետական և տեղական գիտաժողովներով:

Նախորդ տարիների հաշվետու ընդհանուր ժողովներում մշտապես բարձրացվում էին հրատարակված աշխատությունների որակի, դրանց գիտական-ակադեմիական բնույթի հարցերը: Հաշվետու տարվա արդյունքներում այդ թերությունը հաղթահարելու որոշ առաջընթաց է նկատվում: ՀՀ նախագահի մրցանակի արժանացավ Ա. Աղասյանի, Հ. Հակոբյանի, Մ. Հասրաթյանի, Վ. Ղազարյանի «Հայ արվեստի պատմություն» ընդհանրացնող ծանրակշիռ աշխատությունը: Հրատարակվեց Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն» ուսումնասիրությունը՝ 10 լեզուներով, որով մեծապես հաղթահարվեց այն տնական թերացումը, որ հայ ժողովրդի պատմության հույժ կարևոր հիմնահարցերը օտար լեզուներով չեն հրատարակվում և միջազգային հանրության սեփականությունը չեն դառնում: Գ. Գյոդակյանի «Էջեր հայ երաժշտության պատմությունից» աշխատության մեջ ըստ արժանվույն ներկայացված են հայ դասական երաժշտության պատմության հիմնական փուլերը: Հրատարակվեց Հ. Սիմոնյանի՝ Կիլիկիայի կոտորածներին և ազատագրական պայքարին նվիրված մեծածավալ մենագրությունները: Ուշագրավ են Հ. Մարությանի «Հայ ինքնության պատկերագրությունը, ցեղասպանության հիշողությունը», Պ. Մուրադյանի «Հին Թիֆլիսի հայ եկեղեցիները» մենագրությունները, «Հայկական տրանզիտ» անգլերեն ժողովածուն՝ նվիրված հայ հասարակության ձևափոխումներին և գիտական-ակադեմիական այլ հրատարակություններ: Գիտական ժառանգության պահպանման ուղղությամբ հրատարակվել են Աբգար Հովհաննիսյանի անտիպ աշխատությունները՝ Վ.Պողոսյանի և Գրիգոր Արծրունու հոդվածների ստվարածավալ ժողովածուն՝ Յա. Խաչիկյանի աշխատասիրությամբ:

Շարունակվել են դեռևս խորհրդային տարիներին և անկախության ժամանակ հիմնադրված մատենաշարերի հրատարակման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Հաշվետու տարում հրատարակվեցին «Հայ ժողովրդական հեքիաթների» 16-րդ, Հայ ազգագրության և բանահյուսության» 26-րդ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի 27-րդ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտությունների» 6-րդ, «Հայոց պատմության հարցեր» 10-րդ, «Հայ արվեստի հարցեր» 2-րդ, «Հայ ավանդական երաժշտության» 4-րդ հատորները, «Գրականագիտական հանդեսի» 9–10-րդ համարը և այլն:

Անդրադառնալով պետական նպատակային ծրագրով իրականացվող «Հայոց պատմության» և «Հայաստանի հարակից երկրների պատմության բազմահատորյակների» և «Հայոց պատմության» ռուսերեն երկհատորյակի ստեղծման աշխատանքների ընթացքին՝ Վ. Բարխուդարյանը հույս հայտնեց, որ նախատեսված աշխատանքները, բացի ռուսերեն տարբերակից, մինչև տարեվերջ կավարտվեն և կհանձնվեն հրատարակության: Նա անդրադարձավ նաև կադրերի երիտասարդացման, ինստիտուտների գործունեության բարելավման հիմնահարցերին, գիտաշխատողների սոցիալական խնդիրներին:

Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն տնտ. գ. դ. Սերգեյ Ղազարյանը, *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն պ. գ. թ.* Կարեն Խաչատրյանը, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ* Ալեքսանդր Մանասյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, *որոնք անդրադարձան երիտասարդներին ինստիտուտներում ընդգրկելու հնարավորություններ ստեղծելու, ինստիտուտների հրատարակած աշխատանքները ընթերցող լայն շրջաններին հասցնելու գործուն մեխանիզմ ստեղծելու, համաակադեմիական երիտասարդական խորհուրդ կազմակերպելու, հասարակական գործընթացների վրա ակտիվորեն ներգործելու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության գործունեության հարցերին:*

Բարձրացված հարցերի շուրջ ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադ. Ռադիկ Մարտիրոսյանը*:*

Բաժանմունքի 2009 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվեց դրական:

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը լսեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ Յուրի Ապրեսյանի *(ՌԴ) «Ռուսաց լեզվի ակտիվ բառարանի հիմունքները» և* Յուրի Հարությունյանի *(ՌԴ) «Ռուս էթնոսը և հայկական սփյուռքը Ռուսաստանում» գիտական զեկուցումները:*

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովում քննարկվեցին Հայաստանի հնագույն պատմության հիմնահարցերը: Որպես հիմնական զեկուցողներ հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, *պատմական գիտությունների թեկնածու* Պավել Ավետիսյանը, *բանասիրական գիտությունների դոկտոր* Մարգարիտ Խաչիկյանը*: Մտքերի փոխանակությանը մասնակցեցին ակադ.* Վլադիմիր Բարխուդարյանը, *ակադ.* Համլետ Գևորգյանը, *պ. գ. թ.* Կարեն Խաչատրյանը, *բ. գ. դ.* Լավրենտի Հովհաննիսյանը, *ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ* Սիմոն Կրկյաշարյանը, *պ. գ. դ.* Էդուարդ Դանիելյանը, *ակադ.* Մանվել Զուլալյանը *և ուրիշներ:*

ՀՐԱՆՏ ՔՈՉԱՐՅԱՆ